Հավելված 3
«Գլաձոր ՈՒՎԿ» ՓԲԸ
«Սպառողական վարկերի
տրամադրման կանոնակարգի»

ԱՌԱՆՑ ԳՐԱՎԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

Վարկային դիմում-հայտը լրացնելիս պահանջվող փաստաթղթեր

1. Վարկային դիմում-հայտ
2. Հաճախորդի անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ նույնականացման քարտ) (բնօրինակ)
3. Հաճախորդի հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ), բացակայության դեպքում՝ տեղեկանք համապատասխան մարմնից ՀԾՀ չստանալու վերաբերյալ (բնօրինակ կամ կրկնօրինակ)
4. Տեղեկանք Հաճախորդի աշխատավայրից, որտեղ պետք է նշվի վերջինիս զբաղեցրած պաշտոնը և ամսական աշխատավարձի չափը (բնօրինակ)
5. Այն դեպքում, երբ Հաճախորդը չի աշխատում, եկամուտը հաստատող այլ փաստաթղթեր և/կամ եկամուտների վերաբերյալ հայտարարություն (բնօրինակ)
6. Տեղեկանք բնակության վայրից (բնօրինակ կամ կրինօրինակ)
7. Եթե Հաճախորդի եկամուտները ձևավորվում են ձեռնարկատիրական գործունեությունից՝

- հիմնադիր փատաթղթեր՝ պետական ռեգիստրի վկայական, ՀՎՀՀ, կանոնադրություն և այլն (բնօրինակ կամ կրկնօրինակ),
- տեղեկանք գործունեությունից ստացված եկամուտների վերաբերյալ (բնօրինակ),
- նախորդ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական, հարկային հաշվետվություններ (բնօրինակ կամ կրկնօրինակ),
- այլ փաստաթղթեր Ընկերության պահանջով:

Վարկը հաստատելուց հետո պահանջվող փաստաթղթեր

1. Հաճախորդի ընտանեկան կարգավիճակը հաստատող փաստաթղթեր, ինչպիսիք են՝ ամուսնության վկայական, ամուսնության պայմանագիր, ամուսնալուծության վկայական և այլն (բնօրինակ)
2. Հաճախորդի հետ բնակվող կամ վերջինիս խնամակալության տակ գտնվող անձանց անձը հաստատող փաստաթղթեր կամ ծննդյան վկայականներ (բնօրինակ)
3. Երաշխավոր(ներ)ի անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ նույնականացման քարտ) (բնօրինակ)
4. Երաշխավոր(ներ)ի հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ), բացակայության դեպքում՝ տեղեկանք համապատասխան մարմնից ՀԾՀ չստանալու վերաբերյալ (բնօրինակ կամ կրկնօրինակ)
5. Տեղեկանք Երաշխավոր(ներ)ի աշխատավայրից, որտեղ պետք է նշվի վերջինիս զբաղեցրած պաշտոնը և ամսական աշխատավարձի չափը (բնօրինակ)
6. Այն դեպքում, երբ Երաշխավոր(ներ)ը չի աշխատում, եկամուտը հաստատող այլ փաստաթղթեր և/կամ եկամուտների վերաբերյալ հայտարարություն (բնօրինակ)

Ելնելով տարաբնույթ հանգամանքներից կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն:

Ընկերությունը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով Ընկերությունը կարող է «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ Հաճախորդին: